

## 2018Թ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնտեսական մասի բազմաբնույթ գործունեությունը ապահովում է համալսարանի բնականոն աշխատանքը:

Տնտեսական մասի աշխատակիցները ներգրավված են եղել համալսարանում 2018թ կազմակերպված բոլոր միջոցառումներին, կատարել են ղեկավարության կողմից իրենց տրված բոլոր հանձնարարությունները: Մասնավորապես կատարվել են.

1. Ուսումնական թիվ 1 մասնաշենքի հարավային և արևելյան ճակատային մասերի պատուհանների փոխարինում ժամանակակից եվրոպատուհաններով:
2. Ուսումնական թիվ 1 մասնաշենքի հարավային և արևելյան արտաքին պատերի ճակատային սավաղների ներկում:
3. Ուսումնական թիվ 1 մասնաշենքի սանհանգույցների վերանորոգում:
4. Քիմիայի լաբորատորիայի վերանորոգում, արդիականացում:
5. Համալսարանի մասնաշենքերի տանիքների ջրհորդանների, ջրահեռացման խողովակների միացությունների ստուգման և վերանորոգման աշխատանքներ:
6. Համալսարանի վարժարանի տանիքում ձնարգելիքների տեղադրման, անցակետի ջրահեռացման խողովակների նորով փոխարինման և տեղադրման, տանիքի թիթեղների պտուտակներով ամրացման աշխատանքներ:
7. Վանաձորի Գր. Լուսավորիչի 47 հասցեի համալսարանի մասնաշենքի էլեկտրական սնուցումը թիվ 6 դպրոցին պատկանող վահանից առանձնացվել է և դարձել ենք առանձին բաժանորդ:
8. Բազում գյուղում գործող ՎՊՀ ճամբարի աշխատանքների կազմակերպում:
9. ՎՊՀ-ի գլխավոր մասնաշենքի միջանցքների և առանձին կաբինետների ընդհանուր թվով 610մ<sup>2</sup> մանրահատակի լաքապատում և 678մ<sup>2</sup> մակերեսով հատակների հղկում, անցքերի մշակում լաքապատում:
10. Համալսարանի թիվ 1 մասնաշենքի 4-րդ հարկի միջանցքում լրացուցիչ ջեռուցման մարտկոցների մոնտաժում:
11. Համալսարանի Տիգրան Մեծի 36 հասցեի ներքին բակի դիտահորերի մաքրում:
12. Ձմռան նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կատարվել են կաթսայատան որոշ սարքավորումների մասնակի վերանորոգում և ընդհանուր տեխնիկական զննում:
13. Բազում ուսումնամարզական հանգրվանի մասնաշենքներում մետաղապլաստե դուռ-լուսամուտների կարգաբերում, մասնավորապես դռան ապակե կոտրված փաթեթի փոխարինում նորով, դռների և պատուհանների ծխնիների , փականների նորոգում կամ նորերով փոխարինում:
14. Ապամոնտաժված մետաղական ճաղավանդակները համալսարանի և Տիգրան Մեծի 38 շենքի բակի սահմանային պարիսպի վրա էլեռակցումով մոնտաժում:

15. Համալսարանի փոշով կրակմարիչները (Փ/Կ 1- 3 հատ, Փ/Կ2- 16 հատ, Փ/Կ3- 14 հատ, Փ/Կ5- 8 հատ) վերալիցքավորում:
16. Համալսարանի Գր.Լուսավորիչ 47 հասցեում գտնվող ուսումնական մասնաշենքում նոր ջրագիծ ենք մոնտաժել և դարձել առանձին բաժանորդ:
17. Կատարվել են 1-ն և 2-րդ մասնաշենքերի սենյակների , լսարանների միջանցքների պատերի և առաստաղների մասնակի ներկարարական վերանորոգում (550 մ<sup>2</sup>):
18. Վերանորոգվել են ուսումնական սեղան-նստարաններ , աթոռներ:
19. Վերանորոգվել է գրադարանը:
20. Համալսարանի ողջ տարածքում տնտ. մասի մշտական ուշադրության տակ են էլեկտրական սարքավորումները, սան.հանգույցները , բակային տարածքները, որտեղ չաշխատող լամպերը,սարքերը և դետալները վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով :
21. Ընդհանուր թվով 2-րդ ուսումնական մասնաշենքում 11 սենյակներում ու կաբինետներում և բուժկետում կատարվել են հատակների երեսապատում լամինատով (355 մ<sup>2</sup>):

Տնտեսական մասի վարիչ

Մ. Վիրաբյան

25.12.2018թ